ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ


ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՄՄԻԿ ԲՅԲՈՒԹՅԱՆ**

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԺՈՒԼԵՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԼԻՃՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ


ՄԱՐՏՈՒՆԻ 2022թ.

# Բովանդակություն

1.Ներածություն……..3

2.Գրական ակնարկ……..5

2.1 **Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը**……..5

3.Փորձարարական հետազոտություն……..……13

3.1.Խմբի նկարագիրը……..13

Փորձարարական դաս 1……13

Փորձարարական դաս 2……14

Եզրակացություն ……15

Գրականության ցանկ ……16

Հավելված …… ……18

**Օրվա դասի պլան** 1…… ……18

**Օրվա դասի պլան** 2…… ……22

## Ներածություն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է,որը լավագույն կերպով մատուցվում է հայոց պատմության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական

խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային

հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները։ 2Փորձենք հասկանալ թե ի՞նչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը Հայոց պատմության դասերին։ Չ՞է,որ հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը ։ ——————— 1, Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65։ 2,Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում։ Ուսուցչի ձեռնարկ։էջ 5 4 2Հայոց պատմությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն։ Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները , հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները , փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը,պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տողի ու դերի մասին։ Հենց այս պատճառով է , որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։

## Գրական ակնարկ

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նախատեսվում է ,որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դր սևորի դրան հասնելու ձգտում ու կամք։ Ունենա ազգային ինքնագիտակցություն Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, Ունենա արդարության , լավատեսության և պատասխանատվության զգացում, Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը, Գիտակցի իր ժողովրդի

նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը։ Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն. . . 4Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական,դաստիրակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ։ Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիրակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում ,այլ գիտելիքների ու կարողությունների ,արժեքային որակների,կամքի ,բնավորության ,զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում։ Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիրակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները,որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում։ Նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները,որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում։ Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային,էքսկուրսիա ,դասղեկական ժամ , արտադասարանական միջոցառումներ և այլն)առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը։ Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները , միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիաներ, ընդօրինակել միմյանց և այլն։ 3Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է։Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ,նույնիսկ փորձառու ուսուցչի համար։ Դա կախված է մի շարք գործոններից,

1. սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից,

2. նպատակներից,ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրների լուծումից,

3. ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից

4. դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից ,

5. սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու ՝ պատմության դասերի ուղղվածությունից,

6. դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից,

7. պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից,միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի պայմանների ստեղծումից , որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք,

8. սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից,

9. ստեղծագործական ,զգացմունքային մթնոլորտի ձևավորումից ,որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա։

Պատմության որակյալ դասի գլխավոր հատկանիշը և,ընդհանրապես, պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը պատմական և մանկավարժական գիտությունների ժամանակակից նվաճումներին,առաջավոր փորձին ,ուսումնադաստիրակչական

գործընթացի օրինաչափություններին։Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պատմության դպրոցական դասընթացը չի ընդգրկում պատմության պատմական գիտության բոլոր նվաճումները։ Պատմության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սովորողների մարդկության պատմական ուղու,նրա սոցիալական , հոգևոր մ բարոյական փորձի վերաբերյալ գիտելիաներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն։Ոչ մի դեպաում չի կարելի թույլ տալ պատմության դպրոցական դասընթացի բարդացում և սովորողների ծանրաբեռնում արտածրագրային նյութերով։ Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը,դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը։ Ուսումնական ծրագրի բովանդակությունը , դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիաների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաղումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները։ 5Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ , ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը։ Անհատական աշխատանքում դաստիրակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն , ինանակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ։ «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն,հարգանք դեռահասի անձի նկատմամբ»։ Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է

լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում; Պատմության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի,որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը,ուսումնադաստիրակչական նպատակը։ Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ։ Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ , պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքներիմ հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն։ Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ։ Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության –հանրագումարային դասերըմ կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը։ Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը,մեր համոզմամբ,խառը /համակցված/ դասն է ,որին ստորև կանրադառնանք փոքր-ինչ հանգամանորեն ։ Դասի այս տիպն այսպես է կոչվում այն պատճառով, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում , ընդհանրացում , ստուգում և գնահատում։Դասի այս տիպը ամենատարածվածն է, մանավանդ ցածր դասարաններում , որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է , նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով , կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ։ Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս ։ Այս դասի ընթացքում գործադրվորմ են բացատրական-ցուցադրական, էրիստիկ զրույցներ, դատողական բացատրական-

ցուցադրական,էվրիստիկ զրույցներ, դատողական, վերլուծական և այլ եղանակներ։ Եթե դասին գրեթե հավասարապես են ներկայացվում երկու կամ մի քանի դիդակտիկական նպատակներ, ապա դա կլինի խառը միացյալ դասի այս կամ այն տարբերակը։ Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են ,սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝զինել աշակերտներին ազգային արժեքներով։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ։

1. Սովորողներին զինել հին,միջնադարի,նոր և նորագույն ժամանակնորի հայոց պատմության ամբողջական գիտելիքներով,որոնց միջով կարմիր թելով պետա է անցնի ազատության,անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը։ Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից։Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին,տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին։

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները , հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները։

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների , առանձնահատկությունների մասին։ Ծանոթացնել հայ ժողովրդի մշակույթային արժեքների և համամարդկային նվաճումների հետ։ Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակույթային կոթողներին։

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը,ազատ,խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը։ Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ։

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել,թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները , ինչպես են ընտանիք կազմել,սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը,նշել,որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

8. Դաստիրակել խորը հայրենասիրություն ,ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:Ներարկել այն գաղափարը,որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը,որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

10. Հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման , հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11. Նպաստել մարդասիրությն և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն։

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ։

14. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները. խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը,մտածողության ինքնուրույնությունը,սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները։ Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու , ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվոլու,անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու,վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ։ Ձևավորել պատմական դեպքերը,երևույթները համեմատելու , վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ. Զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի,ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ Զարգացնել սովորողների զգայական ընկալման,մտավոր ր հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն,կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում,համադրում ր այլն)։

# Փորձարարական հետազոտություն

## Խմբի նկարագիր

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի Լիճքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում:

Այս դասարանում սովորում են 25 աշակերտ՝ 12 աղջիկ և 13 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: Բոլորը սիրում են «Հայոց պատմություն» առարկան, սիրով են մասնակցում դասերին, քննարկումներին:

**Փորձարարական դաս1**

**Դասի թեման ընտրել եմ « Հայոց մեծ եղեռնը»**

Դասը կհանձնարարեմ «Շրջված դասարանի» մեթոդով՝ կհանձնարարեմ խմբերին համացանցում գտնել սկզբնաղբյուրներ հետևյալ հարցադրումների վերաբերյալ.

- Ի՞նչ փուլերով է ընթացել Հայոց Մեծ եղեռնը:
- Նշեք առավել հայտնի եղեռնազոհ հայ մտավորականների անուններ:
- Ե՞րբ և ո՞ր վայերում տեղի ունեցան ինքնապաշտպանական մարտեր:
- Ի՞նչ նշանակություն ունեցան ինքնապաշտպանական մարտերը:

Դասի ընթացքում խմբային աշխատանքը կկատարենք «Աշխատանք սկզբնաղբյուրներվ » մեթոդով:

Դասի ընթացքում կհնչի Կոմիտասի հանճարեղ երաժշտություններից մեկը, որը էլ ավելի կոգեշնչի աշակերտներին՝ լսել , զգալ, ապրել այդ հնչյուներով և ավելի հայրենապաշտ լինել, լինել մեծ հայրենասեր ու պահանջատեր:

Տեղին է հիշատակել՝

«Հիշում ենք ու պահանջում»:

**Աշխատանք սկզբնաղբյուրներով:** Պատմության դասավանդման լավագույն մեթոդներից է սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը: Սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը կարևոր միջոց է ուսուցումն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու համար: Սկզբնաղբյուրում մշտապես առկա են տարաձայնություններ, հակասություններ՝տարբեր իրողությունների ու խնդիրների շուրջ: Այս հանգամանքը սկզբնաղբյուրը դարձնում է ուսուցման գործընթացը խթանող միջոց: Սկզբնաղբյուրով աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղեկանալ հակասություններին ու տարաձայնություններին, այլև մասնակցել դրանց քննարկմանը և ավելի ամբողջական պատկերացում կազմել այդ հարցի շուրջ: Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն աշակերտների գիտելիքների, վերլուծական կարողությունների և հմտությունների զարգացման գործում: Ուղղակիորեն առնչվելով սկզբնաղբյուրի նյութինª աշակերտը ստանում է զարմանալու, հարցադրումներ անելու, բացատրելու և մեկնաբանելու հնարավորություն: Սկզբնաղբյուրները հետաքրքիր գաղափարների շտեմարան են, որի նյութերը կաղապարված, ադապտացված չեն: Սկզբնաղբյուրները լրացնում են դասագիրքը: Այս մեթոդը մեծ հնարավորություն է ստեղծում նաև միջառարկայական կապերի ապահովման համար, քանի որ պատմիչների գործերը, նկարները, ֆիլմերը, գրական և գիտական ստեղծագործությունները, պատմական և իրավական փաստաթղթերն ու վավերագրերը բովանդակում են տարբեր առարկաների վերաբերյալ ինտեգրող (միասնացնող) գիտելիքներ:

Դասարանում սկզբնաղբյուրով աշխատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել սկզբնաղբյուրի հետ աշխատանքի կազմակերպման ձևը, այսինքն՝ ինչպես օգտագործել սկզբնաղբյուրով՝(քննարկում կազմակերպել նրա շուրջ, գրավոր աշխատանք հանձնարարել, բանավոր ներկայացնել, թե դարձնել դերային խաղի թեմա), ինչպես աշխատել անհատական« թե փոքր խմբերով, ինչպես ներկայացնել կատարված աշխատանքը՝ հարցաթերթիկը, ակնարկ, նկար, ցուցապաստառ, բանավոր խոսք և այլն« ինչպես գնահատել աշակերտներին՝ թեստ, ռուբրիկ և այլն:

**Փորձարարական դաս2**

**Այս դասի համար ընտրել եմ «1918թ Մայիսյան հերոսամարտերը » թեման**

Դասը կհանձնարարեմ «Շրջված դասարանի» մեթոդով՝ կհանձնարարեմ խմբերին համացանցում գտնել սկզբնաղբյուրներ հետևյալ հարցադրումների վերաբերյալ

Դասի ընթացքում խմբային աշխատանքը կկատարենք «Դեպքի ուսումնասիրում » մեթոդով:

Ամփոփումը կատարել «Եռանկունացում» ռազմավարության միջոցով՝ որը հնարավորություն է տալիս պստմսկսն նյութի երեք մեկնաբանություններ կամ երեք տարբեր գործոններպատկերավոր համադրել և վերլուծել:

Մեկնաբ. 1



Երեք աշակերտների մոտ այս վերլուծությունը շատ լավ ստացվեց:

**Մեկնաբանություն 1**- Մայիսյան հերոսամարտերը ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնության հաղթանակն էր:

**Մեկնաբանություն 2-**Եղեռն տեսած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը:

**Մեկնաբանություն 3-** Մայիսյան հերոսամարտը դարձավ հայոց նոր ժամանակների Ավարայրը, որը իր խաղացած դերով ու նշանակությամբ հիրավի հայ ժողովրդի պատմության ամենահերոսական դրվագներից է:

Մայիսյան հերոսամարտերը հիմք հանդիսացան Հայաստանի պետական անկախության համար և ծնունդ առավ Առաջին հանրապետությունը:

**Դեպքի ուսումնասիրություն:** Սա ուսուցման ժամանակակից մեթոդներից է, որը հաջողությամբ կարող է կիրառվել պատմության ուսուցման ընթացքում: Այս մեթոդի նպատակը որոշակի դեպքի, իրադարձության, իրավիճակի բազմակողմանի ուսումնասիրությունն է, որի արդյունքում գնահատվում և արժևորվում է դեպքը, արվում են եզրահանգումներ: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտներն ստանում են երևակայական կամ իրական խնդրահարույց իրավիճակի (հանգամանքներ, պատահարներ, դիպվածներ) կամ դեպքի նկարագրությունը, որը պարունակում է տվյալ դեպքին վերաբերող հեղինակի դիրքորոշումը, կողմնակի անձի տեսակետը, հիմնական, բացահայտված փաստեր, որտեղ առկա են որոշակի հակասություններ, կարծիքներ, տեսնել են հակասությունները՝ լուծող իրավիճակներ: Այնուհետև նա քննարկում, վերլուծում է այդ փաստերն ու տեղեկությունները, պարզաբանում անցյալի ու ներկայի միջև հակասությունները, զուգորդում այն հայտնի նմանատիպ իրավիճակների կամ նախադեպերի հետ, գնահատում խնդրի էությունը, կայացնում  որոշում և ներկայացնում իր լուծումը: Դեպքերը կարող են հորինել ինչպես ուսուցիչը, այնպես էլ դասարանը ու առանձին աշակերտը:

## Եզրակացություն

Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում,Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ

ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:

Հենաբար յուրաքանչյուր ուսուցչի քաղաքացիական ձգտումն է՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ:

## Գրականություն


**1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:**

**2. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ:**

**3. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:**

**4. Ա. Ե. Օլշաննիկովա, Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., 84 էջ:**

**5. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015թթ. պետական զարգացման ծրագիր,**

Հավելված

Օրվա դասի պլան 1

Հայոց պատմություն

11-րդ դասարան

**Կազմող՝ Ժուլետա Սարգսյան**, Լիճքի միջնակարգ դպրոց

| Առարկա | **Հայոց պատմություն** | **Ամսաթիվ** | **23,02,22** | **Կիս** | **2** | **Դաս** | **11** |
|---|---|---|---|---|---|---|---|
| Խմբի բացվածքը | **Աղջիկ12, տղա 13, ՕՏ, ՈՒՀԿ** | | | | | | |
| Դասի թեման | **Հայոց մեծ եղեռնը** | | | | | | |
| Օգտագործվող նյութեր | 11-րդ դասարանի Հայոց պատմության դասագիրք, քարտեզ, տետրեր, մարկերներ, գրատախտակ, համակարգիչ, սահիկաշար: | | | | | | |
| Ամբողջական պատկեր | Սովորողները նախորդ դասերից արդեն գիտեն՝<br>• Առաջին համաշխարհային պատերազմի շարժառիթը, ռազմաքաղաքական խմբավորումները/Եռյակ դաշինք, Քառյակ միություն/, նրանց նպատակները, Օսմանյան կայսրության և ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը կապված հայ ժողովրդի հետ, պատկերացում ունեն նաև սկսված աշխարհամարտից հայերի ակնկալիքների մասին: | | | | | | |
| Դասի նպատակը | Նպաստել Առաջին աշխարհամարտի, դրանում հայ ժողովրդի մասնակցության, **Հայոց մեծ եղեռնի**, և ինքնապաշտպանական մարտերի, հայության նյութական և մարդկային կորուստների մասին գիտելիքների ձեռքբերմանը, 20-րդ դարասկզբի կարևոր փաստերն ու իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու , համեմատելու, վերաբերմունք արտահայտելու , գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:<br>Իմանա՝<br>Հայոց մեծ եղեռնը Օսմանյան Թուրքիայի կողմից դեռևս մինչև Առաջին աշխարհամարտը պետականորեն մշակված և նախապատրաստված, հայերի հայրենազրկման և ոչնչացման ծրագիր էր, որը հիմնականում իրագործվեց 1914թ. Հոկտեմբերի վերջից մինչև 1916թ. Ամառը: | | | | | | |
| Դասի խնդիրները | • Կբացատրի Օսմանյան Թուրքիայի կողմից դեռևս մինչև Առաջին աշխարհամարտը պետականորեն մշակված և նախապատրաստված, հայերի հայրենազրկման և ոչնչացման | | | | | | |

| | |
|---|---|
| | ծրագիրը՝ **Հայոց մեծ եղեռնը**:Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ազգային-մշակութային ակնառու գործիչների, նրանց ստեղծագարծությունները,<br>• Ներկայացնի տվյալ ժամանակաշրջանի մշակութային գործիչների գործունեության առանցքային դրվագները:<br>• Փորձի կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի ու արդի մշակութային ձեռքբերումների միջև,<br>• Գնահատի ազգային մշակույթի ձեռքբերումները և մշակութային գործիչների ներդրումը հայ և համաշխարհային մշակույթի մեջ |
| **Վերջնարդյունքներ** | **Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ**<br><br>**Գիտելիք**<br>Աշակերտը կիմանա.<br><br>1. Սահմանել ի՞նչ ենք հասկանում Հայոց Մեծ եղեռն ասելով:<br>2. Իմանալ ե՞րբ և ու՞մ կողմից է ծրագրվել հայոց ցեղասպանությունը:<br>3. Բացատրել թե ի՞նչ փուլերով է ընթացել Հայոց Մեծ եղեռնը:<br>4. Նշեք առավել հայտնի եղեռնազոհ հայ մտավորականների անուններ:<br>5. Գիտենալ ե՞րբ և ո՞ր վայերում տեղի ունեցան ինքնապաշտպանական մարտեր:<br>6. Կարողանալ քարտեզի վրա ցույց տալ այն բնակավայրերը, որտեղ 1915թ կազմակերպվել են ինքնապաշտպանական մարտեր:<br>7. Արժևորել ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը:<br><br>**Արժեհամակարգի ձևավորում**<br>• Վերլուծի և արժևորի հայ ժողովրդի մշակութային ձեռքբերումները,/թվարկի եղեռնազոհ հայ մտավորականների անունները և ստեղծագործական ժառանգությունը/<br>• գիտակցի մշակութային ժառանգորդության յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:<br><br>**Հմտություն**<br>• Հետազոտի զանազան պատմական աղբյուրներ Հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ, ձևավորի համակարգային վերլուծական հմտություն պատմական աղբյուրներ և |

| | |
|---|---|
| | տեքստեր ընթերցելու վերաբերյալ: |
| **Կապը ՀՊՉ ի հետ** | Հ1 Վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը:<br>Հ2 Հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք:<br>Հ28 դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.<br>Հ29 ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.<br>Հ30 գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ.<br>Հ45 ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ. |

| Գործ. Ժամ/ տևող | Ուսումնական գործունեություն Աշակերտներ | Ուսումնական գործունեություն Ուսուցիչ | Հարցադրումներ | Կիրառվող մեթոդներ |
|---|---|---|---|---|
| 2ր<br><br>Խթան.<br>/5ր/ | Պատրաստվում են դասին<br><br>Դիտում են սահիկաշարը, հիշում անցածը, պաստառի վրա ներկայացնում հարցերի պատասխանները: | Մուտք, հաշվառում<br><br>Ցուցադրում է սահիկաշար «հայոց մեծ եղեռն» թեմայով, մտագրոհը կատարում է հարցերի օգնությամբ: Դասի ընթացքում հնչում է Կոմիտասի «Կռունկ» ստեղծագործությունը | 1.Ինչ փուլերով է ընթացել Հայոց մեծ եղեռնը:<br>2.Նշեք առավել հայտնի եղեռնազոհ հայ մտավորականների անուններ:<br>3.Երբ և որ վայրերում տեղի | «Շրջված դասարանի» մեթոդով էր հանձնարարվել դասը:<br>Սահիկաշարի դիտում:<br>Մտագրոհը հարցադրումների մեթոդով:<br><br>Աշխատանք սկզբնաղբյուրներով տարբերակված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 25-30ր<br><br>5-10ր<br><br>2ր | Աշակերտները բաժանվում են 4 խմբի, կատարում «Աշխատանք սկզբնաղբյուրներով», լսելով Կոմիտասի «կռունկը»:<br><br>Ներկայացնում են իրեց կարծիքը, հարցադրման և սկզբնաղբյուրի վերբերյալ<br><br>Նշում է հանձնարարությունը, հարցեր տալիս: | Յուրաքանչյուր խմբի տալիս է մեկ հարց և հանձնարարում համացանցից գտնել համապատասխան սկզբնաղբյուր, մշակել ցուցապաստառի վրա, պատրաստվել ներկայացնելուն:<br><br>Լսում է, մասնակցում քննարկումներին, հարցեր տալիս: Կատարում գնահատում<br><br>Հանձնարարում է տանը գտնել տեղեկություն Վանի ինքնապաշտպան. Նախապատրաստման, կազմակերպման և հաղթանակի մեջ Արամ Մանուկյանի դերի մասին: | ունեցան ինքնապաշտպանական մարտեր:<br><br>4.Վեր հանեք ինքնապաշտպանական մարտերի պատմական նշանակությունը: | ուսուցում: |

Օրվա դասի պլան 2

**Թեմա** Դաս 8. 1918թ Մայիսյան հերոսամարտերը Հայոց պատմություն

**11-րդ դասարան**

**Կազմող՝** Ժուլետա Սարգսյան, Լիճքի միջնակարգ դպրոց

| Առարկա | Հայոց պատմություն | Ամսաթիվ | 9.03.22թ. | Կիսամյակ | 2 | Դասարան | 11 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Խմբի բացվածքը | **Աղջիկ12, տղա 13, ՕՏ, ՈՒՀԿ** | | | | | | |
| Դասի թեման | **1918թ Մայիսյան հերոսամարտերը** | | | | | | |
| Օգտագործվող նյութեր | 11-րդ դասարանի Հայոց պատմության դասագիրք, քարտեզ, տետրեր, մարկերներ, գրատախտակ, համակարգիչ, սահիկաշար: | | | | | | |
| Դասի նպատակը | Աշակերտը իմանա՝<br>• Ներկայացնել հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը 1918թ գարնանը, ուր վճռվելու էր նրա լինել-չլինելու հարցը:<br>• Ցույց տալ, թե ի՛նչ էր սպառնում հայ ժողովրդին Արարատյան դաշտ ներխուժած թուրքական զորքերի հաջողության դեպքում:<br>• Վեր հանել Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը:<br>• Ձևավորել սեփական ուժերին ապավինելու և մինչև վերջ պայքարելու համոզմունք… | | | | | | |
| Դասի խնդիրները | • Բացատրել Մայիսյան հերոսամարտերի զարգացման պայմանները, առանձնահատկությունները:<br>• Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ազգային-մշակութային ակնառու գործիչների, նրանց ստեղծագործությունները,<br>• Ներկայացնի տվյալ ժամանակաշրջանի մշակութային գործիչների գործունեության առանցքային դրվագները:<br>• Փորձի կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի. ու արդի մշակութային ձեռքբերումների միջև,<br>• Գնահատի ազգային մշակույթի ձեռքբերումները և մշակութային գործիչների ներդրումը հայ և համաշխարհային մշակույթի մեջ | | | | | | |
| Վերջնարդյունքներ | **Դասի վերջնարդյունքները՝** | | | | | | |

| | |
|---|---|
| | Աշակերտը կկարողանա<br>1. Ըստ ժամանակագրության թվարկել Մայիսյան երեք նշանավոր հերոսամարտերը:<br>Սարդարապատի՝ 1918թ մայիսի 22-28-ը<br>Բաշ-Ապարանի՝ 1918թ մայիսի 23-29-ը<br>Ղարաքիլիսայի՝ 1918թ մայիսի 25-30-ը :<br>2. Թվարկել Մայիսյան հերոսամարտերին աչքի ընկած հայ զորավար-հրամանատարներին՝ համապատասխանեցնելով իրենց պաշտպանած ճակատներին: Մայիսյան հերոսամարտերում աչքի են ընկել Մ Սիլիկյանը , Դ. Բեկ-Փիրումյանը , Ա. Մանուկյանը / Սարդարապատ/, Դրաստամատ Կանայանը / Բաշ-Ապարան/, Գարեգին Նժդեհը ,Ա. Բեյ-Մամիկոնյանը / Ղարաքիլիսա / (Առնվազն 1 ական անուն ):<br>3. Գնահատել հայ հոգևորականության և Հայոց եկեղեցու ազգապահպան դերակատարումը այդ օրհասական պահերին :<br>4. Արժևորել հերոսամարտերի նշանակությունը: Մայիսյան հերոսամարտերի ամենակարևոր նշանակությունն այն էր, որ մոտ հազարամյա ընդմիջումից հետո մայր հայրենիքում հայ ժողովուրդը կարողացավ պայքարի գնով վերականգնել անկախ պետականությունը և ձախողվեց հայերին վերջնականապես բնաջնջելու երիտթուրքերի ծրագիրը:<br>5. Քարտեզի վրա ցույց տալ Սարդարապատը, Բաշ Ապարանը, Ղարաքիլիսան:<br><br>**Արժեհամակարգի ձևավորում**<br>• Վերլուծի և արժևորի Մայիսյան երեք նշանավոր հերոսամարտերը: ,<br>• գիտակցի մշակութային ժառանգորդության յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:<br><br>**Հմտություն**<br>• Հետազոտի զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր Մայիսյան երեք նշանավոր հերոսամարտերի վերաբերյալ , ձևավորի համակարգային վերլուծական հմտություն պատմական աղբյուրներ և տեքստեր ընթերցելու վերաբերյալ: |
| **Կապը ՀՊՉ ի հետ** | Հ1 Վերլուծի և ընկալի տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկանա դրանց հիմնական գաղափարը:<br>Հ2 Հայերեն ազատ զրուցի իրեն հետաքրքրող թեմաների մասին, կառուցի ընտրված նպատակին, խնդիրներին և<br>լսարանին համապատասխան գրագետ բանավոր և գրավոր խոսք:<br>Հ28 դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.<br>Հ29 ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.<br>Հ30 գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ.<br>Հ45 ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ. | | | |
| Գործող<br>Ժամ/տևող. | Ուսումնական գործունեություն<br>Աշակերտներ | Ուսումնական գործունեություն<br>Ուսուցիչ | Հարցադրումներ | Կիրառվող մեթոդներ |
| 3ր<br><br>Մտագրոհ<br>5-7ր | Պատրաստվում են դասին<br><br>Աշակերտները դիտում են սահիկաշարը, կատարում նշումներ և տալիս են բանալի բառերի բացատրությունները: | Մուտք, հաշվառում<br><br>Հակիրճ ներկայացնում է դասին անդրադառնալիք հարցերը և սահիկաշարով ներկայացնում բանալի բառեր՝<br>• Երևանյան զորախումբ<br>• Ա. Մանուկյան<br>• Գևորգ Ե Սուրենյանց<br>• Սարդարապատ<br>• Բաշ-Ապարան<br>• Ղարաքիլիսա<br>• Վեհիբ փաշա | | «Շրջված դասարանի» մեթոդով էր հանձնարարվել դասը:<br>Սահիկաշար<br><br>«Դեպքերի ուսումնասիրում» |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | • Բաթում<br>Որոնց միջոցով փորձում է պարզել , թե սովորողները որքանով են յուրացրել նյութը | | |
| 15-20ր | Կատարում են խմբային աշխատանք՝ «Դեպքի ուսումնասիրում»:<br>Քննարկում, վերլուծում փաստերն ու տեղեկությունները,վերլուծում անցյալի ու ներկայի միջև հակասությունները, զուգորդում հայտնի նմանատիպ իրավիճակների հետ, գնահատում խնդրի էությունը, կայացնում որոշում և ներկայացնում լուծումը: | Հետևում է խմբերի քննարկումներին, ուղղորդում, դասարանի օգնությամբ պատասխանում հարցերին, առաջադրում հրցադրումներ: | 1.Ինչու Անդրկովկասի կառավարությունը շահագրգռվածություն հանդես չբերեց Արևելյան Հայաստանի պաշտպանության հարցում:<br>Ինչ նշանակություն ունեցավ<br>Սարդարապատում տարած հաղթանակը հայ ժողովրդի համար: | |
| 10ր | Խմբերը ներկայացնում են կատարված աշխատանքը՝ նախապես համացանցից վերցրած | Լսում է խմբերի ներկայացումը , ապա ներկայացնում | Համաձայն եք այն մտքին, որ Սարդարապատի ճակատամարտը նոր ժամանակների ավարայր էր: Հիմնավորեք ձեր | «Եռանկյունացում» |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տեղեկատվությունով ստանում սահիկաշար՝ Գևորգ Ե Սուրենյանցի գործունեությունը: | դասի նպատակների և վերջնարդյունքներ ի իր տարբերակը: | տեսակետը , կապելով այն արցախյան պատերազմի հետ:<br>Ձեր կարծիքով , ինչ՞ու Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը հրաժարվեց Բյուրական տեղափոխվելուց: | ռազմավարություն |
| 5ր | | Ամփոփում՝<br>«Եռանկյունացում»<br>Ռազմավարության մեթոդով:<br>Տնային առաջադրանք՝<br>Տեքստից դուրս գրել տարեթվերը, կազմել ժամանակագրական աղյուսակ: | | |